



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5-րդ կետի պահանջներով,

Նկատի ունենալով ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 14-ի թիվ 1067-Ն որոշմամբ հանրային պաշտպանության համար հատկացված լրացուցիչ միջոցների առկայությունը, որի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2022թ. հուլիսի 19 թիվ 12/8-Լ որոշմամբ հանրային պաշտպանների հաստիքների քանակն ավելացվել է 10-ով՝ սահմանելով 69,

Հաշվի առնելով հանրային պաշտպանների հավելյալ հաստիքների տեղաբաշխման անհրաժեշտությունը և այդ առնչությամբ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի '

1. 2022 թվականի հուլիսի 19-ից **69 (վաթսունինը)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝

1) Երևան քաղաքում՝ **34 (երեսունչորս)** հաստիք, որից 25 (քսանհինգ) հաստիքը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 9 (ինը) հաստիքը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ.

2) մարզերում՝ **35 (երեսունհինգ)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականի հուլիսի 19-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.11.2021թ. թիվ 264-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

19 հուլիս 2022թ.
թիվ 165-Լ
ք.Երևան



ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

№	ՀՀ մարզ	Հոգ նստավայր	Հաստիքների բաշխում			Հաստիքների ընդ-քանակը	Հո-ների քանակը	Գործունեության վայր
			1	1	0,5			
1	2	3	4			5	6	7
1.	Արագածոտն	Աշտարակ	1	1	0,5	2,5	3	Աշտարակ, Ապարան, Թալին
2.	Արարատ	Արտաշատ	1	0,5		4,75	8	Արտաշատ, Արարատ, Վեդի
			0,5	0,5				
		Մասիս	1	0,5				
			0,5	0,25				
3.	Արմավիր	Արմավիր	1	1		5,25	8	Արմավիր, Էջմիածին
			0,5	0,5				
		Էջմիածին	1	0,5				
			0,5	0,25				
4.	Գեղարքունիք	Գավառ	0,5			2,25	5	Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ
		Սևան	0,5	0,5	0,25			
		Վարդենիս	0,5					
5.	Կոտայք	Հրազդան	0,5	0,5		3,75	7	Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Արուսյան
		Արուսյան	0,5	0,5				
			0,5	0,25				
		Եղվարդ	1					
6.	Սյունիք	Կապան	0,5	0,5	0,5	3,75	7	Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի
		Գորիս	1	0,5				
		Սիսիան	0,5	0,25				
7.	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	0,5	0,5		1	2	Եղեգնաձոր, Վայք
8.	Տավուշ	Իջևան	0,5	0,5		2,75	6	Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ
			0,5	0,5				
		Դիլիջան	0,5	0,25				
9.	Լոռի	Վանաձոր	1	1	1	4,25	6	Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի
			0,5	0,25				
		Ալավերդի	0,5					
10.	Շիրակ	Գյումրի	1	1	0,5	4,75	7	Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Աշոցք
			0,5	0,5	0,5			
			0,5	0,25				
Ընդհանուր թիվը						35	59	